# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 93**

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի պահանջը, ինչպես նաև Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 12-ի թիվ 19-Ա որոշման պահանջը, **որոշում եմ**

Փոփոխել քաղաքացի Վարդան Հովսեփյանի սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր 07-062-0025-0005/ 0.15 հա արդյունաբերական, ընդերքօգտագործման, արտադրական հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության <<հասարակական կառուցապատման գործառնական նշանակության>>:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2019 թ.մայիսի13
գ.Վերին Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 94**

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի պահանջը, ինչպես նաև Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 03-ի թիվ 24-Ա որոշման պահանջը, **որոշում եմ**

Փոփոխել քաղաքացի Վարազդատ Խուդաբաշյանի սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր 07-062-0204-0005/ 0.084 հա գյուղատնտեսական նշանակության /վարելահող/ հողամասից 0.0314 հա հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության <<հասարակական կառուցապատման գործառնական նշանակության>> և 0.0526 հա հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության՝ <<բնակելի կառուցապատման գործառնական նշանակության>>:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

20 19 թ.մայիսի13
գ.Վերին Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
**13 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 95**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ `ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N470-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, 35-րդ կետի դ) ենթակետերով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 03-ի N23-Ա որոշմամբ, հաշվի առնելով Երան Պարույրի Մովսիսյանի համաձայնությունը, որոշում եմ՝

Վերին Պտղնի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող սեփականություն հանդիսացող 07-062-0001-0214 կադաստրային ծածկագրով 0.00325 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը և դրա վրա առկա 07-062-0001-0214-001 կադաստրային ծածկագրով 24.55 քմ ավտոտնակը՝ սեփականության վկայական 11032019-07-0060 գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցը իրականացրած Երան Պարույրի Մովսիսյանին:

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
2) շինությունը կառուցված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում:
3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

2. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) ավտոտնակի 1 քմ -ի համար՝ 2600 ( երկու հազար վեց հարյուր ) ՀՀ դրամ (տարածագնահատման 7-րդ գոտու՝ կիրառված գործակիցը 0.26):
2) հողամասի 1 քմ-ի կադաստրային արժեքը՝ 4524 (չորս հազար հինգ հարյուր քսանչորս) ՀՀ դրամ :

3. Երան Պարույրի Մովսիսյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900105231212 հաշվեհամարին 63830 (վաթսուն երեք հազար ութ հարյուր երեսուն) ՀՀ դրամ ավտոտնակի գինը:
2) համայնքապետարանի 900105231170 հաշվեհամարին 147030 (մեկ հարյուր քառասունյոթ հազար երեսուն) ՀՀ դրամ հողամասի գինը:

4. Սահմանել որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Երան Պարույրի Մովսիսյանի կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՊՈՂՈՍՅԱՆ ՀՀ*03503712*

20 19 թ.մայիսի13
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 96**

## ՎԱՐԱԶԴԱՏ ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով,Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով, **որոշում եմ**.

1. Վարազատ Խուդաբաշյանին սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր 07-062-0204-0005/ հողատարածքին տրամադրել հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի Նորավան թաղամաս 1-ին փողոց թիվ 51:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2019 թ.մայիսի 14
գ.Վերին Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ
**16 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 97**

### ՔԱՂ. ԱԼԲԵՐՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 50-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Ա. Հարությունյանի դիմումը՝ **որոշում եմ.**

Հարգել Ա. Հարությունյանին խնդրանքը և թույլատրել վերջինիս քանդել իրեն պատկանող բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասում գտնվող (համաձայն անշարժ գույքի N 17042018-07-0016 վկայականի) N1բնակելի տունը, շինությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

**20 19թ. մայիսի 16**
**գ.Վերին Պտղնի**